



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891. 71 -

4-99

Ի. ԿՈՒՐՑ

3156

# ՃԸՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Թարգմանութիւն ուսերէնից  
Ն. Աթանասեանի

Թ Ի Ե Լ Ի Ս

Արագատիպ տպարան Ա. Բուժաթեւածէի, Նիկ. № 21

1903

891. 71

4-99



Дозволено цензурою, Тифлисъ, 29 Апрелья  
1903 года.

## ՃՂՄԱՐՏՈՒԹԻՒՆ

### I.

Մօնարեֆելտօնի պալատում մեծ շփոթութիւն էր տիրում: Գիշերը մի քանիսին ձերբակալել էին, որոնց թւումն էր նոյնպէս, ազդեցիկ իշխանի ազգական Գաստօնը:

Պատմում էին պալատական մի դաւադրութեան մասին, որի ղեկավարը իբրև թէ Գաստօնն էր. սրա գրութիւնը բոլորին մտատանջութեան մէջ էր գրեցել: Երկտասարգ իշխանը մեծացել էր Մօնարեֆելտօնիցիների աչքի առաջ, և բոլորի սիրելին էր, այն ինչ նրա հօրեղբօրը մինչև այժմ չէին ներել այն, որ նա երեսուն տարի առաջ, օտարական վարձկանների գլուխ անցած, սուրը ձեռքին մտաւ իշխանի ամրոցը:

Ծերունու խիստ և կասկածոտ բնու-

Թիւնը փոքր ինչ մեղմացնելու համար, շրջապատողները համոզեցին նրան ամուսնանալ մի երիտասարդ օրիորդի հետ, սակայն այդ կապի վրայ դրած յոյսերը աւելի շատ թառամեցին, քան հարսանիքի շքեղութեան համար հիւսուած պսակները:

Իժբախտութիւնները սկսւեցին հէնց հարսանիքի համար սարքած խաղերի ժամանակ, երբ նորապսակ իշխանը կամենալով ցոյց տալ իր նորաստի կնոջը իր հռչակած ոյժը և ճարպիկութիւնը մենամարտութեան մէջ, յաղթեց Գաստօնից և քիչ էր մնում մեռնէր տեղն ու տեղը:

Ծերունու երկաթեայ կազմած քրտարաւ այդ նա շուտով լաւացաւ և հանդէսները պէտք է շարունակուէին, բայց հէնց այդ ժամանակ բացեց դաւադրութիւնը, որից յետոյ պալատականները ալ ևս հանգստութիւն չունէին: Իշխանը աւելի մռայլ և անմերձենալի

դարձաւ, քան առաջ էր. երիտասարդ իշխանուհին ծանր հիւանդացաւ, ինչպէս ասում էին, իշխանի կեանքը վտանգի ենթարկւելու վախից:

Տայց կամաց կամաց անորոշ մի լուր տարածւեց, որ իբրև թէ Գաստօնին բռնել են իշխանուհու ապարանքում և որ դժւար թէ գեղեցկուհի Ֆիօրդալիզան առողջանայ:

Տանջանքների և մահժան դատապարտածների սարսափելի լուրերը ապարանքից դուրս գալով, տարածւում էր ժողովրդի մէջ, լուռ սարսափ ծնեցնելով:

Այդ ժամանակ Մօնարեֆելտօնում ապրում էր մի օտարական, որ ինչպէս ասում էին, եկել էր հեռաւոր արևելքից: Նրան տեսնում էին բոլոր հասարակական ժողովարաններում որպէս մի հանգիստ դիտող: Նա միս չէր ուտում, հագնում էր միշտ մետաքսեայ սպիտակ շորեր և ինչպէս ասում էին, ծանօթ էր Մազիայի գաղտնիքների հետ: Իշխանը

կանչեց նրան իր մօտ և ասաց.

— Ես գիտեմ, որ քո հայրենիքում գաղտնի գիտութիւններ և արեեստներ կան: Եթէ ուզում ես ողորմութեանս արժանանալ, ցոյց տուր ինձ այն ամենասարսափելի և երկար տանջանքը, որով կարելի է մահւան հասցնել յանցաւորին:

Օտարականը հանդարտ նայելով նրան, ասաց առանց մտածելու:

— Գու նրան՝ իր յանցանքի ծանրութեան մէջ հասցրու ինքնաճանաչութեան, իսկ յետոյ թող իր սեփական խղճին:

Իշխանը բարկացած հռհռաց.

— Ուրեմն քո հայրենիքում խիղճը դեռ ևս գոյութիւն ունի: Նրան այստեղ վաղուց մոռացել են: Պատանու համար, իր հօրեղբոր ալիքների վրայ ծիծաղելը ոչ թէ ամօթ է, այլ հերոսութիւն: Լսիր.— իմ մօտ ազգականս անպատեւել, ծիծաղել է այն բանի վրայ, որ

ինձ համար թանկ է աշխարհում ամեն բանից, և ես չեմ հանգստանալ, մինչև որ վրէժխնդիր չլինեմ: Ես լիշեցի բոլոր սարսափելի տանջանքները, բայց նրանցից ոչ մէկը ինձ չէ բաւականացնում:

— Եւ դու չես գտնիլ մի այնպիսի տանջանք, որ քեզ բաւականացնի, պատասխանեց օտարականը.— որովհետև ոչ մի տանջանքով դու չես կարող ոչնչացնել յանցանքը երկրից, կամ նրա գործողին: Ահա թէ ինչու քեզ մնում է ներել:

— Որ եղածը ես չեմ կարող փոխել, այդ ես գիտեմ, բայց ինչո՞ւ ես ասում, որ ես ոչ մի կերպ չեմ կարող ոչնչացնել յանցաւորին: Չէ՞ որ նրա կեանքը կախած է իմ մի խօսքից:

Օտարականը հանգիստ ժպիտով բացասեց գլխով.

— Ի՞նչպէս, ես, Գիանպաօլօն, Մօնտրեֆելտօնի իշխանը, չեմ կարող իմ մահացու թշնամուք ոչնչացնել, որ իմ ձեռքումս է:

— Տէր, այդ ոչ ոք չէ կարող անել,  
հանդարտ պատասխանեց նրա խօսակիցը:

— Երգւում եմ Յիսուսի արիւնով,  
սպառնալով բացականչեց իշխանը, որ  
այստեղ, քո աչքերի առաջ նրան կօչն-  
չացնեմ, ինչպէս որ ոչնչացնում եմ այս  
լամպարը, որ էլ երբէք չի լուսաւորի:

Օտարականը հանդարտ ժպիտով պա-  
տասխանեց.

— Դու ջարգեցիր լամպարը, բայց  
դու չ'ոչնչացրիր այն լույսը, որ լուսա-  
ւորում է ամենուրէք: Դու չես կարող  
զերուդ սպանել, քանի որ գերիդ—դու  
ինքդ ես:

— Դու ցնդաբանում ես:

— Ես ճշմարտութիւնն եմ ասում,  
իշխան, այն ճշմարտութիւնը, որ չիմա-  
ցողի համար ցնորք է թւում: Գերիդ—  
քո ազգականն է, եղբայրդ, հայրդ, կենդ,  
վերջապէս—դու ինքդ ես:

Մի վայրկեան նրան շեշտակի նայե-  
լով, իշխանը արհամարհանքով ծիծաղեց:

— Իմ ծաղրածուն այս քանի օրերս  
մեռաւ և ես նրա համար ոչ մի կաթիլ  
արտասուք չթափեցի, որովհետև նա  
վերջին ժաճանակներս ձանձրալի էր դար-  
ձել: Գու կարող ես նրա տեղը բռնել.  
Ես տեսնում եմ, որ մի առանձին տե-  
սակի բաւականութիւն ես պատրաստում  
դու ինձ համար: Եւ այսպէս, կնշանակի  
որ ես իմ ազգական Պատտօնն եմ, որ  
ես եմ ինձ անպատել, ցանկանալով մըտ-  
նել իշխանուհու սենեակը. կնշանակի,  
հարկաւոր էր որ ես ինքնասպանութիւն  
գործէի, որով պատժւած կլինէր յան-  
ցանքը:

— Չէ, իշխան, դու ինձ չհասկացար:  
Ոչ մի յանցանք արիւնով չի կարելի պատ-  
ժել: Ինչպէս ասացի, քեզ մնում էր  
ոչնչացնել ամբողջ մարդկութիւնը, որով-  
հետև նա ամբողջապէս մեղաւոր է: Բայց  
քո անպատելութիւնը կշարունակէր քեզ  
տանջել: Դու ճիշդ ասացիր, որ եղածը  
էլ չի կարելի փոխել:

Իշխանը մտատանջութեան մէջ ընկաւ:

—Յիշիր այն օտարական երգչին, շարունակեց հնդիկը, որ քեզ համար, քո մերձաւորների ներկայութեամբ երգում էր Ալէքսանդր Մեծի քաջութիւնները: Այն ժամանակ ես զլիարկով կանգնած էի պալատականների մէջ դահլիճի դռան մօտ, ոչ թէ երգչին լսելու համար, այլ որ տեսնեմ քեզ: Ես գիտէի, որ երբևիցէ դու ինձ կանչելու ես, դրա համար էլ ուզում էի քեզ ուսումնասիրել:

—Այո, ես յիշում եմ այդ օրը:

—Ես հետևում էի քեզ ուշադրութեամբ շարունակեց օտարականը: Ինչո՞ւ դու կարմրեցիր, երբ նա երգում էր Գրանիկայի կոիւր, ինչո՞ւ էիր ուզում արտասուել, երբ նա յիշեց Ալէքսանդրի մեծահոգութիւնը դէպի Գարեհի ընտանիքը: Ինչո՞ւ գունատեցիր, լսելով Կլիտի մահը: Այդ բոլորը նրանից է, որ հէնց ինքդ ես այդ երգերի հերոսը:

—Ի՞նչ. ես Ալէքսանդր մեծն եմ:

—Այո:

—Կարելի է որ ես հարբեցող Կլիտն էլ եմ:

—Այո:

—Ես Ալէքսանդր Մեծն եմ, հարբեցող Կլիտը, նենգաւոր Գաստօն իշխանը, և միաժամանակ ես Գիանպաօլօն եմ, Մօնտրեֆելտօնի իշխանը:

—Գու այդ բոլորն էլ ես, ասաց իմաստունը:

—Իսկ դու, դու ծաղրածու ես:

—Լսիր, իշխան: Եթէ դու չունենայիր Ալէքսանդրի մեծահոգութիւնը և քաջութիւնը, ինչպէս կարող էին նրանք քեզ զգացել տալ և ոգևորել: Մթթէ դու կհասկանայիր այն երգը, ուր խօսւում է նրա բարկութեան և զղջալու մասին, եթէ այդ բոլորը չլինէին քո հոգու մէջ: Մարդու կեանքում շատ քիչ դէպքեր են պատահում, այն ինչ մարդու ինքնազգացումը գրկում է կենդանի

և մեռած բոլոր մարդկանց ինքնազգացումը: Գուհասկանում ես այն արարմունքները, որ երբեք չէ գործել Մօսն արեֆելտօնի իշխանը, դու նախազգում ես այն, ինչ որ երբեք չես կրել: Միթէ այդ բոլորը կարելի էր, եթէ դու ամեն ինչ չլինէիր, ամեն բան քո մէջ չլինէր: Նայիր ինչ կենդանի արարածի վրայ որ ուզում ես, և դու կասես, որ այս—ես եմ:

Իշխանն ընկաւ խոր մտածմունքի մէջ, բայց յանկարծ, որպէս թէ զարթնելով ասաց.

—Շարունակիր:

Օտարականը նորից սկսեց.

—Ձեր կրօնը սոսիսեցնում է ձեզ, որ բոլոր մարդիկ եղբայրներ են: Այս մեծ խօսք է, սակայն լոկ խօսքը դեռ բաւական չէ մարդկութեանը: Եթէ ձեր եղբայրը ձեզ բարկացնում է, դուք նրան սպանում էք, մինչև անգամ ձեր Ս. Գիրքն էլ սկսում է եղբայրասպանութեամբ: Գուք բոլորդ եղբայրասպանի

ժառանգներ էք անւանում ձեզ, իսկ մեր ուսումով, ով որ հասկացաւ, թափանցեց չարը, նա այլ ևս չարութիւն չի անիլ, որովհետեւ բոլոր մարդիկ միևնոյն մարդն են: Ամենակարողի արգարութեան առաջ անպատիժ լանցանք չկայ. քո թշնամու վրայ ձեռք բարձրացնելով դու սպանում ես քեզ, որովհետեւ վերաւորողը և վերաւորողը միևնոյն են:

—Ով մարդ, ասածդ չեմ հասկանում. իմ թշնամու տանջանքները տեսնելով ես ուրախանում էի և ոչ մի ցաւ չէի զգում: Միթէ դա այդպէս կլինէր, եթէ ես և նա միևնոյնը լինէինք:

—ձիշտ է, բայց այդ նրանից է, որ մենք ունենք մի այնպիսի զաղանի միջոց, որ լուեցնում է ցաւը. ով որ ընդունի այդ միջոցը նրա ձեռքը կտրել կարելի է, լեզուն ծակել և նա ոչինչ չի զգալ: Այդպէս էլ դու էիր լուել և չէիր զգում, թէ ինչ է կատարում քո

մարմնի հետ, երբ դու հրամայեցիր տանջել քո ատելի մարդուն: Բայց զարթիր, և դու կզգաս նրա բոլոր տանջանքները: Այդ լուեցնող միջոցը, որ մեզ զրկում է զգացողութիւնից, մեր «ես»-ն է, սակայն չկարծես որ նա միանգամից մեզ ազատում է տանջանքներից: Նրանք շարունակում են և մեզ սպասում են ինքնաճանաչութեան շէմքի վրայ:

Վերջին խօսքերը շփոթեցին իշխանին:

— Քո խօսքերը խելագարի ցնորքներ են, ասաց նա, բայց նրանց մէջ մի այնպիսի բան կայ, որ գռգռում է լսելու: Ապացուցիր ինձ տեսանելի կերպով, որ ես ինձ վերաւորողի հետ մի ամբողջութիւն եմ կազմում, եթէ չես ուզում, որ քեզ որպէս խելագարի բանտարկել տամ:

— Դժւար կատարելու բաներ ես պահանջում, բայց ես կաշխատեմ քեզ բաւարարութիւն տալ, միայն նստիր և ուղիղ նայիր աչքերիս մէջ:

Իշխանը կատարեց նրա հրամանը, բայց հէնց որ նա հայեացքը դրեց օտարականի հանգիստ վառող աչքերին, նրա ցանկութիւնները հանդարտեցին: Նա զգաց մի գաղտնի ոյժ, որ նրան ամուր գրկել էր և կարծես գուրս էր մղում իր սեփհական անձնաւորութեան միջից: Նա զիմադրում էր, նա աշխատում էր այդ փայլուն աչքերի հրապուրներից ազատւել, որպէս զի իր սեփհական «ես»-ը կարողանայ պահպանել, բայց զգում էր, որ բաժանւում է նրանից: Սակայն այդ աչքերը, որ նրա զիմացն էին, էլ չէին բաժանւում նրանից, այլ մօտենում էին և կարծես խրլում նրա աչքերի մէջ: Նրանց փայլը սաստկանում էր, նրանք մեծանալով մօտենում էին միմեանց, մինչև որ վերջապէս կազմեցին անբնական մեծութեամբ և շրացնող լուսաւոր մի գունտ: Իշխանը ուզում էր փակել աչքերը, բայց այդ նրա ոյժերից վեր էր. իսկ գրանից յետոյ արդէն նա կորցրեց

մի որ և է բան ցանկանալու ընդունա-  
կութիւր: Նրա «ես»-ը ոչնչութեան էր  
հասցրած: Նա կորցրեց իր մարմնի շո-  
շափման և անհատի զգացմունքը: Լոյսի  
տպաւորութիւնները աստիճանաբար թու-  
լացան, վերջապէս նրանք բոլորովին ան-  
յայտացան և նրան տիրեց մի մոխրա-  
գոյն մթութիւն, որտեղ ոչինչ չէր կա-  
րելի զանազանել: Բայց նրա մէջ մնաց  
հոգեկան ինչ որ մի բան, և այդ բանը  
ընդգրկում էր ամբողջ աշխարհը: Յետոյ  
նրան թւաց, սր դէպի նա կռանում է  
մի գլուխ և որ մէկը նրա ականջում  
խօսում է, բայց նա ոչինչ չէր հասկա-  
նում:

## II

Մի առ ժամանակից յետոյ միայն  
նրա մարմնի մասերը թանձրացան, կաղ-  
մեցին մի ինչ որ նիւթ, որը հաւաքել է  
մի կէտի շուրջ: «Ես»-ի զգացումը վերա-

դարձաւ նրան, սակայն դա նրա նախկին  
«ես»-ը չէր, այլ ինչ որ մի նորն էր:  
Նա իրեն երիտասարդ էր զգում, նրան  
առաջնորդում էր բուռն ցանկութիւն-  
ները: Նրան թւում էր, որ շտապում է  
մի ինչ որ տեղ, ուր նրան մղում են  
իր վառ ցանկութիւնները: Նրա առաջ  
պատկերացաւ պարտեզի պտուղ, որի  
վրայ նա կառւի թեթևութեամբ աշխա-  
տում էր վեր մագլցել:

1001  
7664

— Տես, նա կիպարիտների տակ կանգ-  
նած է, ասաց նրա կողքին մէկը:

Նա թռաւ և գրկեց իր զիմացից  
եկող կնոջը: Կինը ամուր սեղմեց նրա  
կրծքին, նրանց շրթունքները միացան  
և նա զգաց, ինչպէս երկու գողողուն  
ձեռքեր գրկեցին նրա վիզը: Այս բոլորը  
զգում էր քնից արթնացած իշխանը շատ  
պարզ կերպով: Նրան շատ հասկանալի  
էր իր նոր «ես»-ի յարաբերութիւնները  
դէպի այդ աղջիկը: Մինչև անգամ այն  
որ աղջիկը նրան Գառտօն էր անվանում,



այդ էլ համապատասխանում էր նրան շրջապատող իրերին: Նա մի երիտասարդ քաջ իշխան է, որի քաջութիւններն երգւում էին, իսկ նա Ֆիօրդալիզան է, նրա նշանածը, որի հետ պէտք է պսակւի երկու շաբաթից յետոյ: Միայն օրիորդի պաղ ձեռքերը և դողը, որ ցնցում է նրա մարմինը, զարմացնում էր նրան:

Նրան թւում է, որ հարցնում է օրիորդին:

— Ի՞նչ է պատահել քեզ հետ, ի՞նչն է քեզ անհանգստացնում:

Այնինչ նրա շրթունքներից անորոշ և ընդհատումներով ձայներ են դուրս գալիս միայն:

Որպէս խիստ դատավճիռ, հնչեց նրա ահանջում մէկի ձայնը:

— Բաժանւիր նրանից ընդ միշտ, դու այլ ևս նրան երբէք չես սեղմելու կրծքիդ, որովհետև նրա եղբայրները և իշխանը կիսկեն նրան քեզնից:

Քնածը մի վայրենի մունչիւն հանեց:

— Ո՞վ կհամարձակւի անել այդ, էլ ինչի՞ համար է սուրբ, միթէ չգիտեն թէ ես ո՞վ եմ:

— Զգոյշ իշխան, զգոյշ: Կայ մէկը, որ կանի այդ, և որի համար ամեն բան կարելի է. դա ինքը իշխանն է: Քո հօր եղբայրդ ուզում է նրան, նա արդէն նրա նշանածն է:

Բարկութեան մի մունչիւն դուրս թռաւ քնածի՝ կրծքից: Նրա ծաղիկը, նրա Ֆիօրդալիզան պէտք է իշխանի, իր ծերունի հօրեղբոր բաժինը լինի: Ահա թէ ինչպէս է վարձատրում նրան հօրեղբայրը, նրա համար տարած յաղթութիւնների, նրա համար ստացած վէշքերի համար:

— Ես այդ չեմ կարող տանել, խըռ-խըռացնում էր նա բարկութիւնից խեղդւած ձայնով: Աւելի շուտ ես կսպանեմ նրան: Ես կըկանչեմ ասպետներիս, ես կոչնչացնեմ նրա ամրոցը:

Նա սեղմում էր բռունցքները և կրճտեցնում ատամները:

— Անձնատուր եղէք իշխան, ոյժը նրա կողմն է: Նայեցէք ձեր Ֆիօրդալիզային, որ կորացել է ցաւից և բաժանւեցէք նրանից. դուք այլ ևս յաւիտեան կորած էք միմեանց համար:

Բարձրաձայն արտասուելով նա կառկառում է ձեռքերը դէպի իր սիրածը: Ֆիօրդալիզան անհետացել է, իսկ նա մնացել է մթութեան և անմխիթօր միայնակութեան մէջ:

### III.

Թանձր և ճնշող խաւարը պատեց նրան, յետոյ ամեն ինչ պարզւեցաւ: Նա գտնուում էր լուսաւորւած և զարդարւած եկեղեցու մէջ: Խնկի և ծաղիկների բուրմունքը խառնւել էր միմեանց: Պալատականները տօնական հագուստներում շրջապատել էին նրան և պատ կազմել եկեղեցու միջին մասում, իսկ պատերի մօտ կանգնած էր ժողովուրդը: Սեզանի

առաջ կանգնած էր հարսը: Նա տեսաւ, ինչպէս վերջինս ծուռնի չոգեց իշխանի կողքին և ընդունեց նրա մատանին:

— Ի՞նչքան հեշտ է ընկճում կինը, երբ հարցը գալիս է թագ տիրելուն, շշնջում էր նրա ներսում մի չար ձայն, որը նրան ստիպում էր լուռ և բարկացկոտ տրտնջալու:

Բայց ահա դէպի նա դարձաւ տանջանքից կերպարանափոխւած մի դէմք. և երկիւղով լի աչքերը կարծես ասում էին. «ներիք ինձ, որովհետեւ ուրիշ կերպ վարւել ես չէի կարող»: Այդ հայեացքի տակ իջաւ նրա բարկութիւնը և անյաղ թելի ու վառ սէրը կրկին և ուժեղ հօսանքով տիրեց նրան:

— Ֆիօրդալիզա... տանջւած մրմընջաց քնածը: Երաժշտութեան ձայնը լրացւեց և պալատականների խումբը բռեց նրան իր հետ եկեղեցուց, գնալով նորապսակների լեռեից: Ահա տանում են հարսին և նա թոյլ է տալիս այդ: Ինչո՞ւ

նա չյարձակեց փեսայի վրայ և չպատառտեց նրան: Կատաղութեան անկարողութեան մէջ նա մռնչում էր որպէս վիրաւոր գազան: Նա գալարւում և ուլորւում էր տանջանքից, կրճտեցնում ատամները, կլճում էր բռունցքները մինչև այն ժամանակ, երբ նրա փոթորկալի բարկութեան մէջ սկսեցին որոշ անձնաւորութիւններն անյայտանալ և նրա տանջանքները ընկղմեցին նրան դժբախտ մարդկութեանը բռնկող ցաւի և տանջանքների ուկիանոսի մէջ:

Միայն լւաճ նոր ձայնից յետոյ կրկին նրա հոգու մէջ կազմեցին նոր անձնաւորութիւններ:

— Թշուառ, քնչ արիւր: Դու վիրաւորել ես իշխանիդ և հօրեղբօրդ: Ահա նրան անշունչ դուրս են տանում:

Այս խօսքերից յետոյ նա տեսաւ իրեն տօնական կրկեսի մէջ, որ լի էր զարդարւած ձիերով և զինւած ասպետներով: Նա ճանաչեց խալիչաներով զար-

դարւած տրիբունան, պճնւած տիկիններով, որոնց մէջ էր նոյնպէս, իշխանական զգեստներում նրա գունաթափ և ընկճւած շուշանը: Տեսնելով նրան, նրա սիրտը սեղմեց դեռ մինչև այժմ անձանօթ և խոր տանջանքի զգացմունքով: Տիկինները շփոթւած գնում էին առաջ և վախեցած նայում էին ամբիօններից: Ներքեւ պալատական ծառաները դուրս էին տանում նորապսակ անշունչ ծերունի իշխանին: Ի՞նչ է պատահել: Միթէ նա նրան սպանել է զիտմամբ, կամ թէ յանկարծակի յուսահատութեան մէջ ուժգին հարւածով գցել է ձիուց, որ միանգամայն դուրս գայ նրա գլխից համբոյրների և փաղաքշանքների ցանկութիւնը: Ինքը Գաստօնը չէր հասկանում այդ: Նա թռաւ ձիուց և սկսեց նայել ամբիօններին, որտեղ պալատական տիկինները դուրս էին տանում զողոթնուն Փիօրդալիգային:

Պատկերը իսկոյն փոխւեց:

Երեկոյ է: Նրա կողքից անցնում է իշխանուհու աղախինը, որը հայեացքով մի տեղ է ցոյց տալիս պարտէզում, որտեղ նա կյայտնի նրան իրեն տւած յանձնարարութիւնը: Փիօրգալիգան ցանկանում էր օգտւել իշխանի հետ պատահած դէպքի արթիւ եղած շփոթութիւնից և ուզում էր խօսել Քաստօնի հետ: Նա մենակ էր իր սենեակում և սպասում էր նրան: Քաստօնը չէր կարող դիմադրել նրա կոչին: Որպէս մտախուզի մէջ, նա հետևում էր աղախինին միջանցքներում և սանդուղներում և արդէն հասել էր այն դռանը, որ ծածկւած էր վարագոյրով և որը տանում էր իշխանուհու սենեակը: Յանկարծ մի ծանր ձեռք իջաւ նրա ուսին: Նրա դէմ կանգնած էր կըրկին սարսափելի ծերունին, նա առողջացել է հարւածից և կանգնած նայում է նրան շեշտակի և սպառնալի կերպով:

Մի րոպէից յետոյ իշխանը շրջապատւած էր պահապաններով, գինաթափ և

կապւած: Միայնակ ընկած էր նա մութ և նեղ բանտում, բայց ոչ երկար: Լուեց շուտով քայլերի ձայն, երկաթեայ դուռը շառաչիւնով բացւեց, ճրագները լուսաւորեցին նկուղը և շէմքում երեւաց իշխանը: Նրան հետևում էին երկու զզւելի դէմքով ծառաներ, որոնք կարծես բնութիւնից որոշւած էին դահիճ լինելու:

— Ս.մուր կաց, շշնջաց նրան ձայնը: Նա կհարցնի քեզ, արդեօք քո զրգամբը, թէ Փիօրգալիգայի հրաւերով ես ներս մտել նրա սենեակը: Քաջ եղիր և վըրկիր իշխանուհուն:

Նա ամբողջապէս լարւեց դիմադրելու համար:

— Ինքզ քեզ մեղադրիր, եթէ ես դիմեմ խիստ միջոցների, լսեց նա իր հօրեղբոր ձայնը և դեռ նա նոր մտածում էր իրեն սպասող տանջանքների մասին, երբ նրանք արդէն իրականացան: Ծառաները յարձակւեցին նրա վրայ, կապեցին նրա ձեռքերը և իշխանի խիստ

Հայեացքների տակ մատնեցին նրան սոսկալի տանջանքների, ոլորեցով նրա անդամները: Քանի դէմքին երևաց պաղ քրքրտինքը, խեղդուող ձայներ էին դուրս գալիս նրա բերնից, օակայն այդ բոլոր տանջանքների վրայ սաւառնում էր մեծ և ամենակարող սէրը:

— Քեզ համար միայն, Ֆիօրդալիզա, միայն քեզ համար...

Յետոյ նրա միտքը շփոթւեց և նա յայտնւեց մարող ճրագի լոյսի տակ, ազատւած իր տանջանքներից, բայց յոգնած անդամներով՝ չոր անկողնի մէջ...

— Այժմ հանգստացիր, ասաց նրան ձայնը, և առաստաղից մի ծանր բան բաժանելով հանդարտ իջաւ և շրջապատեց նրան թանձր քողով: Անէճք իշխանին... սա էր նրա վերջին միտքը:

IV

Իշխանը զարթեց միայն հետևեալ օրը: Հնդիկը չկար այլևս, իսկ նա կրկին

Մօնտրեֆելտօնի իշխանն էր: Բայց նա գգում էր, որ ինքը նրանով է իշխան միայն, որ իրեն շրջապատում են պահապաններ և պալատականներ: Նրա հոգուն զեռ տիրում էր այն կամքը, որ առաջնորդում էր նրան երազներում և որը այժմ նրա մէջ ներքին երկպառակութիւն էր ձգել, քանի որ նա զեռ ևս ատում էր իշխանին և նրան անբացատրելի կերպով տանջում էր այն միտքը, որ ինքը իր ատելութեան առարկան է դառել: Նա ցաւում էր, որ ինքը այլևս ջահել Քաստօն իշխանը չէ, նրա սիրով և տանջանքներով և այդ պատճառով աշխարհը սառեց և հնացաւ նրա համար: Նա չգիտէր թէ ինչ անի ինքը իր հետ, չգիտէր, թէ ինչ է ուզում ինքը:

Արդէն վերջնականապէս վճռելով իր անելիքը, նա կրկին կանչեց հնդիկին և ասաց.

— Քեզ յաջողեց մի քանի ժամուայ ընթացքում ինձ դարձնել այն մարդը,

որին ես առում էի, և այժմ ես տեսնում եմ, որ նրա տանջանքների համեմատ՝ նրա մեղքը ոչինչ է: Նրան ես կազատեմ:

Ճնցաւ մի քանի օր և այդ ժամանակ ոչ ոք չէր համարձակում խօսել իշխանի հետ: Նա անշարժ նստած էր, աչքերը լսուել էր մի կէտի և անհամբերութեամբ հեռացնում էր նրանց, ուրքեր ուզում էին դէպի նրան դալ: Արքունիքը անհանգիստ էր և շփոթւած, իսկ թագաւորական բոլոր գործերը կանգ էին առել:

Գաստօն իշխանը ազատւած էր ասնախից և գտնւում էր իր սենեակներում, բայց այնքան թույլ հսկողութեան տակ, որ եթէ ուզենար, իսկոյն դուրս կպրծներ, բայց նա չէր հեռանում, սրովհետեւ մի զօրեղ ուժ պահում էր նրան իր տեղում:

Վերջապէս իշխանը նորից կանչեց հնդիկին:

—Սրեկէքի որդի, ասեմ քեզ թէ ի՞նչ է կատարւում իմ հոգում:

—Ս.ս, տէր:

—Ինչ թւում է, որ ես տեսնում եմ ճշմարտութիւնը թափանցիկ քողի միջից: Այդ քողի լետեւում կանգնած է ամբողջ մարդկութիւնը: Ես ու դու նրա մասերն ենք, ինչպէս որ իշխան Գաստօնը և գեղեցիկուհի Յիօրդալիզան: Նրանց անպատուողը միաժամանակ անպատոււմ է ամբողջ մարդկութեանը:

Հնդիկը խոնարհեց զլուխը:

—Ս.հա տէր այն ճշմարտութիւնը, որ ես կամենում էի ցոյց տալ քեզ:

Իշխանը մի փոքր մտածելուց լետույն կատեց աշխուժով:

Շատ կարելի է, որ եթէ դու ինչ ստիպէիր մտնել այն աւազակի հոգին, որին այս քանի օրերս հրամայեցի կախել, այն ժամանակ նա արդար կերևար, իսկ նրա դատաւորները մարդասպաններ և անպիտաններ:

—Գոնէ դու կիմանալիր, թէ ի՞նչ պատճառներ, ինչ ներքին և արտաքին ուժերի կապեր, ցանկութիւններ, պա-

տահմունքներ, ժառանգականութեան և հանգամանքների ազդեցութիւններն են հասցրել նրան չարագործութեան:

Իշխանը նորից լռեց և ապա հանդարտ ասաց.

— Մի՞թէ ես կարող եմ կառավարել և դատել այն աշխարհում, ուր ամենքը արդարացի են: Ես ճանաչեցի ճշմարտութիւնը և այժմ իմ ճանապարհից ես դուրս եմ շարտւած:

— Զիշտ ես ասում, պատասխանեց հնդիկը. թող ծառան ծառայի, վաճառականը առևտուր անի, զինուորը պաշտպանի իր հայրենիքը, իսկ իշխանը կառավարի. ամեն մէկը գործում է այնպէս, ինչպէս որ որոշ կարգերը պահանջում են այդ: Բայց ճշմարտութիւն ճանաչածը ոչ մի առընչութիւն չունի սրանց բոլորի հետ: Այն, ինչ որ բարոյական է բոլորի համար, պղծութիւն և անխելքութիւն է սորա համար: Տէր, դու այսօր ճանաչեցիր ճշմարտութիւնը.

քեզ համար փայլեց այն լոյսը, որ լոյս է եփուում բոլորին, բայց քչերն են իւրացնում դրան: Գու ալ ևս խաւարին դռննալ չես կարող:


— Օգնիր ինձ, որ ես հասնեմ կատարեալ լոյսին: Օգնիր, որ ես տեսնեմ ամեն ինչ, հասկանամ բոլորը, ոչինչ չը գգամ, չտանջեմ, բաժանեմ քեզ նման սեփհական անձնաւորութիւնից և ժամանակից:

— Տէր, քո պահանջածը շատ բարձր է իմ ոյժից: Ամբողջ լոյսը կատարեալներից շատ քչերի բաժինն է: Ես ինքս դեռ խնդրում եմ, որ ինձ ընդունեն սրբբարանը, քանի որ դեռ նրանից դուրս եմ գտնւում: Սակայն ես մի մեծ ուսուցիչ ունեմ, որ գիտէ այն ճանապարհը, որով ես դեռ խարխափելով եմ գնում:

— Տար ուրեմն ինձ քո ուսուցչի մօտ: Ես Գաստօնին կտամ իմ թագաւորութիւնս: Նա կըկառավարէ իմ տեղ և Ֆիօրդալիգայի երիտասարդութեան զո-

Հի փոխարէն իր սէրը կպարզէի նրան:  
 — Երգելիք ինձ, որ մտեղէն կերակուր  
 ալ ևս չես ուտիլ: Հագիւր կուսական  
 սպիտակ շորեր, մոռացիւր քո ժողովուրդը,  
 անունդ, հարստութիւնդ, լաղթութիւն-  
 ներդ և հետեւիք ինձ. . . . .  
 Նոյն օրը Գիանպատօ իշխանը ընդմիջտ  
 անյայտացաւ իր թագաւորութիւնից: Նրա  
 տեղը նստեց Գաստօնը, որը ամուսնա-  
 ցաւ գեղեցկուհի Փիօրդալիզայի հետ:  
 Ինչպէս և իր նախորդը, նոր կառավա-  
 րիչը լաճախ սխալուամ էր, իր ցանկու-  
 թիւնների և հանդամանքների պատճա-  
 րով, և նրա օրով Մօնտրեֆելտօնցիներ-  
 րը ապրում էին ոչ լաւ և ոչ վատ, քան  
 առաջ:  
 Իսկ Գիանպատօի և նրան հրապու-  
 ըող Բրամինի մասին ալ ևս ոչինչ չէր  
 լաւում Մօնտրեֆելտօնում:

ի  
 չ  
 հ  
 ո  
 պ  
 ո  
 պ  
 ջո  
 նա  
 սր  
 լակ  
 ան  
 դու



ՀՀ Ազգային գրադարան  
  
 NL0310796

11939

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.